ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 մայիսի 2014 թվականի N Մ-358-Ա
քաղ. Երևան

«ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ» ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանս-ների նախարարության 2014 թվականի ապրիլի 30-ի N 3/3.8-2/6627-14 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մայիսի 6-ի N ՎՄ/3-4/5415-14 եզրակացությունները, ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության հասցեով՝ Ավստրիայից, «Ավստրիական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից, որպես նվիրատվություն, «Բազմակի հաշման-դամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի և տեղեկատվության կենտրոնի համար ստացված՝ «Volkswagen Caravelle 2.5TD» մակնիշի (2000 թվականի արտադրության, նույնականացման համարը՝ WV2ZZZ70Z1H042371, 1,012.26 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 1,907 եվրո, «ԱՄ ՄԶՄ ՄՏ») մարդատար ավտոմեքենայի ներմուծման ծրագիրը:

2. «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-րություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-մուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ